Գեղաձոր

Մակերես՝ 13.5կմ^2

Բնակչություն՝ 1099

Գյուղ Արագածի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 55 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գյոզալդարա, Գյոզալդարա Թուրքի, Գյոզալդարա Վերին: Գեղաձոր է վերանվանվել 1946 թ-ին: Նախկինում մտել է Երեւանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Գյուղն ընկած է Արագածի ստորին սարավանդում, Գեղաձոր գետակի հովտում: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 2190մ բարձրության վրա: Կլիման ցուրտ լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6 - -8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

1831 թ-ին ունեցել է 68, 1897 թ-ին՝ 618, 1926 թ-ին՝ 623, 1939 թ-ին՝ 1058, 1979 թ-ին՝ 847 հայ բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ է գաղթել Արեւմտյան Հայաստանից 1915թ-ին: Համայնքի բնակչությունը կազմում է 1189 մարդ, որից 46% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 54%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 43%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 52%, հետաշխատունակները՝ 5%: Գյուղն ունի 266 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, կապի հանգույց:

Տարածքի մոտ 1/3-ը սեփականաշնորհված է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողերի մեջ մեծ բաժին ունեն արոտավայրերը՝ 358 հա, վարելահողերը՝ 110 հա: Մշակում են հացահատիկ, բանջարաբոստանային կուլտուրաներ՝ կաղամբ, կարտոֆիլի ճակնդեղ: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ:

Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է դպրոցի շենքի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: